

ԼՁՈՒԹՅՈՒՆՆԸ պատվաբեր չէ. Կանանց դեմ ընտանեկան եւ սեռական բռնությունը Չայաստանում

«Ես 14 տարի տարել եմ նրա ծեծը, քանի որ Չայաստանում դա են քեզնից ակնկալում: Չայկական ընտանիքում կինն ամեն ինչի հետ պիտի համակերպվի. պիտի լռի»:

ԴՄ - Ընտանեկան բռնության գոհ, Երեւան, 2008թ.

Չագարավոր կանայք Չայաստանում պարբերաբար բռնության են ենթարկվում իրենց իսկ ընտանիքում: 2007 եւ 2008 թվականներին Amnesty International-ի կատարած ուսումնասիրությունները փաստում են, որ ընտանեկան բռնությունը տարածված երեւոյթ է Չայաստանում: Ըստ հետազոտության տվյալների, այստեղ կանանց մեկ քարորդից ավելին ֆիզիկական բռնության է ենթարկվում ամուսնու կամ ընտանիքի այլ անդամների կողմից, մինչդեռ հոգեբանական բռնության ամենատարբեր դրսեւորումների ցուցանիշը շատ ավելի բարձր է:

Կանայք, որոնք փորձում են իրենց պաշտպանել եւ արդարություն փնտրել, բազմաթիվ արգելքների են հանդիպում: Ընտանիքում կատարված բռնությունը որպէս հանցագործություն գրանցելը դժվար է, քանզի այն հստակ չի սահմանվում օրենքով եւ չի դատապարտվում որպէս հանցագործություն: Ընտանեկան բռնության մասին



հայտնելը հավասարազոր է «ընտանիքը քանդելուն» եւ խստորեն պախարակվում է: Առողջապահության աշխատակիցները, ոստիկանները, դատախազության մարմինները եւ

բոլոր այն պաշտոնյաները, որոնք իրենց առօրյա մասնագիտական կյանքում առնչվում են ընտանեկան բռնության հետ, չեն վերապատրաստվում կամ շատ հազվադեպ են վերապատրաստման



2 Լռությունը պատվաբեր չէ. Կանանց դեմ ընտանեկան և սեռական բռնությունը Հայաստանում

դասընթացներ անցնում: Amnesty International-ի հետ զրույցների ընթացքում կանայք մտահոգություն էին հայտնում աճող բռնության, սոցիալական մեկուսացման և բողոքները ետ վերցնելու համար գործադրվող ճնշումների մասին: Ընտանեկան բռնության դեպքում ոստիկանություն դիմելը հնարավոր է եւ հանգեցնի ամուսնալուծության հակառակ կնոջ կամքին՝ դատարկաձեռն թողնելով նրան:

Մտածելակերպը փոխելը

Կանանց դեմ բռնությունը վերացնելու ուղղությամբ Հայաստանի իշխանությունների կողմից նախնական որոշ քայլեր ձեռնարկվել են: 2004 թվականին ընդունված Գործողությունների ծրագիրը նպատակ ուներ վերացնել կանանց և աղջիկների թրաֆիկինգը և հասարակության մեջ բրաձրացնել կանանց դերը: 2008 թվականին ընտանեկան բռնությունը որպես քրեական հանցագործություն սահմանող օրենքի նախագիծը քննարկման փուլում էր: Ոստիկանության աշխատակիցների համար վերապատրաստման ծրագրեր էին ձեռնարկվել՝ իրականացնելու ընտանեկան բռնության դեպքերի արձագանքման համար ոստիկանության աշխատակիցների պարտականությունները սահմանող դրույթները:

Այս ամենը, սակայն, դեռ բավարար չէ: Հայաստանի իշխանությունները պարտավոր են կատարել մարդու իրավունքների

միջազգային օրենքով սահմանված իրենց պատկանությունները. հարգել, պաշտպանել և ապահովել կանանց և աղջիկների՝ բռնությունից զերծ կյանքով ապրելու իրավունքը: Անհրաժեշտ է հատկապես զգալիորեն փոխել քրեական արդարադատության համակարգի արմատացած մոտեցումները՝ ապահովելու համար ընտանեկան և սեռական բռնության զոհերի արդարության հասնելու հնարավորությունը: Միջոցներ եւ քայլեր է անհրաժեշտ ձեռնարկել օժանդակ ծառայություններ, այդ թվում թեժ գծեր և կացարաններ, ստեղծելու ուղղությամբ, ապահովելով նաեւ օրինապահ մարմինների կողմից՝ կանանց և աղջիկներին բռնությունից պաշտպանելու համար անհրաժեշտ միջամտության ցուցաբերումը: Մինչ այժմ հիմնականում հասարակական կազմակերպությունները (ՀԿ-ներ) են իրենց սեղմ եւ սահմանափակ միջոցներով տարրական պայմաններ, այդ թվում թեժ գծեր, ճգնաժամային կենտրոններ և ապաստարաններ, ստեղծել՝ օժանդակելով գենդերային խտրականության արդյունքում բռնության զոհ դարձածներին:

Ընտանեկան սերտ կապերը հայ մշակույթի անբաժան և նվիրական բաղկացուցիչն են: Գյումրիում տեղակայված «Հայկական Կարիտաս» հասարակական կազմակերպության աշխատակից Ժաննա Հարությունյանի խոսքերով՝ «մարդիկ ցանկանում են փայփայում են ընտանիքի գաղափարը Հայաստանում»: Սակայն, հասարակության կողմից ընտանիքի պաշտպանության

Հայաստանում կանանց դեմ բռնությունն ընհանուր առմամբ ընդունվում եւ անգամ արդարացվում է հասարակության կողմից: Այս տեսակետը լայն տարածում ունի ոչ միայն տղամարդկանց, այլ նաեւ կանանց շրջանում՝ մեծապես խոչընդոտելով կանանց իրավունքների պաշտպանությունն ու կիրառումը. այսպիսի դիրքորոշումն անհրաժեշտ է փոխել: Կանանց նկատմամբ ամեն տեսակի խտրականության վերացման մասին Կոնվենցիայի (Կանանց կոնվենցիա) 5-րդ հոդվածը պետություններից պահանջում է միջոցներ ձեռնարկել՝ «փոխելու կանանց և տղամարդկանց սոցիալական և մշակութային վարվելակերպը, վերացնելու համար այս կամ այն սեռի թերաբժեքության կամ գերազանցության, ինչպես նաեւ կանանց և տղամարդկանց կարծրացած դերաբաշխման վրա հիմնված նախապաշարմունքները, ավանդական և բոլոր այլ սովորույթները»: Հայաստանի իշխանությունների մինչ այժմ ձեռնարկված քայլերը հիմնականում դեկլարատիվ բնույթ են կրել. շատ ավելին պետք է արվի փոխելու համար այսպիսի վերաբերմունքը և դրանով արդարացվող բռնությունը:

ետեւում թաքնվում է ընտանիքում բռնության դեպքերի մասին լռելու և դրանց զոհերին արդարության հասնելու հնարավորությունից զրկելու արմատացած մի սովորույթ: Այդ կանանց ստիպում են արդարություն չփնտրել: Նրանց հարկադրում են պահել ընտանիքի ամբողջականությունը՝ ընտանեկան բռնությունը դիտելով որպես անձնական «ընտանեկան խնդիր», այլ ոչ այդ մասին իրազեկելով պատկան մարմիններին, օրինակ՝ ոստիկանությանը. որպես արդյունք՝ կանայք շարունակում են բռնության ենթարկվել: Չնայած պետությունները պարտավոր են պաշտպանել ընտանեկան կյանքը, սակայն դա չպետք է արվի ընտանիքում բռնության քողարկման կամ ներման հաշվին՝ անտեսելով դրա անխուսափելի հետեւանքները բռնության ենթարկվող կանանց, բռնության զոհ կամ դրա ականատեսը դարձող երեխաների և ամբողջ հասարակության համար: Amnesty International-ի «Վերջ կանանց դեմ բռնությանը» խորագիրը կրող համաշխարհային քարոզարշավը նպատակ ունի աջակցել տեղական ՀԿ-ների և պետական պաշտոնյաների ջանքերին՝ առանց բռնության ընտանիք ապահովելու համար: Հատկապես այն պատճառով, որ ընտանեկան հարաբերությունները մեծ արժեք ունեն, ընտանիքի անդամների և զուգընկերների նկատմամբ բռնության դեպքերը պետք է օրենքով սահմանվեն, պատժվեն և կանխվեն:

«Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ-ի պատվերով 2007 թվականին կատարված ուսումնասիրության

արդյունքները մատնանշում են ընտանեկան բռնությունը հասարակական քննարկման առարկա դարձնելու նկատմամբ հասարակական դիմադրության առկայությունը. հարցվածների 88%-ը համարում է, որ ընտանեկան բռնության դեպքերն առանց պատկան մարմինների միջամտության՝ ընտանիքի ներսում որպես անձնական խնդիր լուծելն առավել արդյունավետ է: Բռնության ենթարկվածների միայն 29%-ն է օգնության դիմել, մեծ մասամբ ընտանիքի անդամներին:

Այս հետազոտությունը Հայաստանում ընտանեկան բռնության տարածվածության, եթե ոչ խնդրի իրական պատկերի մասին հիմնավոր ապացույցներ է ներկայացնում: «Կանանց իրավունքների կենտրոն»-ի հարցումները, ինչպես նաև կանանց ՀԿ-ների ներկայացուցիչների հետ հարցազրույցներն ապացուցում են, որ Հայաստանում կանայք չեն տարբերակում ընտանեկան բռնությունը ֆիզիկական բռնությունից, որը և հանգեցնում է նրանց՝ մարդու իրավունքների ոտնահարմանը: «Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ-ի նախագահ Սուսաննա Վարդանյանի խոսքերով՝ «մենք պետք է հաղթահարենք թե՛ անտեղյակությունը, թե՛ փաստի նկատմամբ մերժողական վերաբերմունքը»:

Կառավարությունը պնդում է, որ ընտանեկան բռնությունն այս երկրում խնդիր չէ: Ես ցանկանում եմ, որ թե՛ պետությունը և թե՛ հասարակությունն ընդունեն

այս խնդրի առկայությունը Հայաստանում: Նրանք չեն ուզում դա անել հայկական մտածելակերպի պատճառով, ըստ որի այդ մասին չի կարելի խոսել: Որոշ կանայք նույնիսկ պախարակում են նրանց, որոնք ապաստարան են գնում: Ես համոզված եմ, որ այդ կանանցից շատերը հենց իրենք ընտանեկան բռնության զոհ են, բայց հայի պատիվն ասում է՝ չես կարող այդ մասին բացահայտ խոսել: Կին ես՝ պիտի համակերպվես:

ՓՆ - Ընտանեկան բռնության զոհ, Երեւան 2008թ.

Լռելը

Ընտանեկան բռնության զոհերը բազմաթիվ խոչընդոտների են հանդիպում ընտանեկան բռնության մասին բարձրաձայնելու ճանապարհին: Հայաստանում կանանց ստիպում են «այդ մասին ընտանիքից դուրս չխոսել», քանզի բաժանման կամ ամուսնալուծության պարագայում հասարակության կողմից քամահարանքն ավելի մեծ է, քան ընտանեկան բռնության դեպքում:

Աղջիկս երբեմն հարցնում է՝ ինչու ինձ մատնեցի այս ճակատագրին: Չգիտեմ, ինչպես բացատրեմ նրան, որ իմ ընտանիքում երբեք ապահարզան չի եղել, որ տատս ու պապս ապրել են միասին 60 տարի, որ ծնողներս ինձ չեն հասականա, եթե լքեմ ամուսնուս: Եւ ու՞ր գնայի: Բնակարանը գրանցված է իր անունով. չնայած ես եմ վճարել դրա համար վերջին 10 տարիների ընթացքում: Բայց միայն դա չէ խնդիրը. ես չեմ կարող

4 **Լռությունը պատվաբեր չէ.**
կանանց դեմ ընտանեկան և
սեռական բռնությունը Հայաստանում



© Martuni Women's Community Council, Armenia/Mariam Gaistian

Ամփոփման մեջ օգտագործված բոլոր հինգ նկարները ՀՀ Փեղարքունիքի մարզի Մարտունու կանանց համայնքային խորհրդի կողմից կազմակերպված «Երբ ընտանիքում խաղաղություն է տիրում» մրցույթի մասնակիցների աշխատանքներն են:

«Վերջին խոսքը հայ տղամարդունն է»:

Ոստիկանության աշխատակից,
Փեղարքունիքի մարզ

ինձ թույլ տալ «բաժանված» կին լինել: Ամուսինը, ինչ էլ լինի, տան տղամարդն է, ու նրա ներկայությունը քեզ ճանաչող մարդկանց աչքերում ինչ-որ կարգավիճակ է տալիս՝ հարեանների, ազգականների ... Այս կարծրատիպերը դեռևս ուժեղ են մեր հասարակության մեջ, ու ես դեռ ինքս դրանք չեմ հաղթահարել:

Մեջբերում «Ժենշինա ի պոլիտիկա» ամսագրի 2007թ. Նոյեմբերի համարից

Մի շարք հասարակական կազմակերպություններ Amnesty International-ի հետ ունեցած զրույցներում նշել են, որ կանանց իրավունքները ընտանեկան արժեքներին ստորադասելը

մեծապես անդրադարձել է իրենց ռազմավարությունների մշակման վրա՝ հատկապես մայրաքաղաքից դուրս: Մարտունու կանանց համայնքային խորհրդի անդամ [Անահիտ Գեւորգյանի] խոսքերով՝ «ընտանեկան բռնության մասին հասարակական քննարկման մեջ երեխաների հարցն առանցքային է»: Երեխաների կյանքի վրա ընտանեկան բռնության ազդեցության մասին հասարակական գիտակցության բարձրացման շնորհիվ է միայն, որ այս ոլորտում գործող ՀԿ-ները կարողացել են խուսափել հայ ընտանիքի վրա «հարձակման փորձ կատարողի» խարանից: Հայաստանում ընտանեկան բռնության ենթարկված կանանց մեծամասնությունը, սակայն, իրեն պարտավորված է զգում հանուն ընտանիքի լռել:

Ես 14 տարի տարել եմ նրա ծեծը, քանի որ Հայաստանում դա են քեզնից ակնկալում: Հայկական ընտանիքում կինն ամեն ինչի հետ պիտի համակերպվի. նա պիտի լռի: Միայն այն պատճառով, որ ես փորձեցի հակադրվել դրան եւ ոստիկանություն դիմեցի ու ամուսնուց բաժանվեցի, համազուլազցիներս ինձ մատով են ցույց տալիս ու ասում՝ գիժ է, տեսա՞ք, ինչ արեց ամուսնու գլխին, նա պիտի սուս մնար: Սա կարծրատիպ է, երեւի ազգային կարծրատիպ, չգիտեմ, բայց եթե կինը ոստիկանություն կամ դատարան է դիմում, ուրեմն ընտանիքը քանդում է:

ԴՄ - Ընտանեկան բռնության զոհ, Երեւան, 2008թ.

Բռնության հետ համակերպվելը

Չուզընկերոջ կամ ընտանիքի անդամների կողմից կնոջ դեմ գործադրվող բռնությունը բազմաթիվ դրսեւորումներ կարող է ունենալ՝ լեզվակռվից ու հոգեբանական ճնշումներից մինչև մեկուսացում և տնտեսական անհրաժեշտ միջոցներից զրկում, մինչև ֆիզիկական կամ սեռական բռնություն և սպանություն:

Եթե ընտանեկան բռնության մասին հայտնելու համար սոցիալական պատիժները խիստ են, դրանք առավել զգալի են այն կանանց հանդեպ, որոնք հայտնում են իրենց ամուսինների կամ զուգընկերների կողմից սեռական բռնության դեպքերի մասին: 2008 թվականի հուլիսին Amnesty International-ի հետ զրույցում հասարակական կազմակերպության ակտիվիստներից մեկն ասաց. «Իրեն հարգող ոչ մի հայ կին ամուսնու կողմից սեռական ոտնձգության մասին երբեք ոստիկանություն չի բողոքի»: Բռնաբարության դեպքերի մեծամասնությունը չի արձանագրվում՝ կատարվածի մեջ հիմնականում բռնաբարվածին մեղադրելու պատճառով: Կանանց հարցերով զբաղվող «Կանանց ռեսուրս-կենտրոն» հասարակական կազմակերպության աշխատակից Լառա Ահարոնյանի հետեւյալ մեջբերումը ցույց է տալիս, թե ինչպես է սեռական ոտնձգության զոհը մեղադրվում կատարվածի համար. «Ոստիկանության

աշխատակցի, կատարածուի կամ դատավորի առաջին հարցը տուժողին հետեւյալն է՝ ի՞նչ ես արել, որ սրան է դրդել»: «Կանանց իրավունքների կենտրոն» ներկայացված՝ կամավորի նկատմամբ սեռական բռնության վերջերս գրանցված գործում բռնաբարության փորձի մասին հայտնող աղջկան (այս դեպքում անծանոթի կողմից) հարցրին. «Գուցե մոռացե՞ր էիր դուռը փակել»:

Այսպիսի մոտեցումները խոսում են հասարակական գիտակցության բարձրացման ուղղված լայնածավալ քարոզարշավի անհրաժեշտության մասին՝ իրազեկելու համար

հասարակությանը, որ հակառակ զուգընկերոջ կամքին իրականացվող սեռական ակտը, ինչպես նաև ամուսնական բռնաբարությունը քրեական բնույթ են կրում: Զրեական արդարադատության աշխատակիցները հատուկ վերապատրաստում պետք է անցնեն՝ սեռական բռնության զոհերի կողմից արդարություն փնտրելու ճանապարհին կանանց համապատասխան աջակցություն տրամադրելու համար:



© Martuni Women's Community Council, Armenia

*Երբ գիշերվա կեսին ես
նոստիկանության բաժանմունք
մտա, նոստիկաններին մեր հենց
այնպես հայտնվելը դուր չեկավ:
Նրանց կարծիքով ես էի մեղավոր,
քանի որ ընդունված չէ հարսի
կողմից սկեսրոջ դեմ հայտ
ներկայացնելը: Այստեղ ընդունված
չէ, որ նոստիկանությունը,
պետությունը պետք է պաշտպանի
մեզ: Ոստիկանության
աշխատակիցներն ինձ փորձում
էին համոզել, որ ընթացք չտամ,
որ սկեսրայրս մեծ մարդ է եւ
այլն... Սակայն դա ինձ վրա
չազդեց: Այնուհետև դատախազն
ինձ ասաց, որ սա ընտանեկան
հարց է եւ մենք ինքներս պետք է
այն լուծենք: Հետո նա փորձեց
ինձ շանտաժի ենթարկել՝
ասելով, որ եթե շարունակեմ,
ապա երեխաներիս վատ կլինի:
Ենթատեքստն այն էր, որ եթե
երեխաներիցս մեկը ցանկանա
օրինակ փաստաբան դառնալ,
նա հեռու չի գնա այսպիսի
ժառանգությամբ: Եւ ես այդ
պատճառով հայտն ետ վերցրի:
ԱԴ - Ընտանեկան բռնության գոհ,
Երեւան, 2008թ.*

Ոստիկանության վերաբերմունքը

Ունձագություն կատարած
ամուսնուն հակահարված
հասցնելու համար կինը
հաճախ դատապարտվում
է հասարակության կողմից,
իսկ ոստիկանության
արձագանքը նրան էլ ավելի
է կաշկանդում. երբեմն սա
պարզապես ոստիկանության՝
գործին չխառնվելու
դիրքորոշումն է: Որոշ դեպքերում
ոստիկանությունը գտնում է,
որ ընտանեկան բռնությունը
«ընտանիքի ներքին խնդիրն» է
եւ բացահայտ հասարակական
հետապնդման չպետք է
ենթարկվի: Որոշ կանայք Amnesty
International-ի հետ զրույցում
հայտնում էին, որ նրանց ստիպել
են իրենց բողոքները ետ վերցնել:

Amnesty International-ը
հարցումներ է կատարել նաեւ
Հայաստանում ոստիկանների
վերապատրաստմամբ
զբաղվող միջազգային
կազմակերպությունների
աշխատակիցների շրջանում,
ինչպիսին Եվրոպայի
անվտանգության եւ
համագործակցության
կազմակերպությունն է:
Նրանց խոսքերով 20 տարվա
աշխատանքային փորձ ունեցող
բարձրաստիճան ոստիկանների
պնդմամբ իրենց մասնագիտական
կյանքում նրանք ընտանեկան
բռնության եւ ոչ մի դեպք չեն
հանդիպել:

Օգնության դիմելը

Amnesty International-ի
հարցումներին մասնակցած
կանայք նշում էին, որ օգնություն
են խնդրել հարազատներից կամ
հարեաններից, բայց հաճախ
մերժվել են նրանց կողմից.
Նրանցից ոմանք բարեկամների
կամ ընկերների խորհրդով ետ են
կանգնել ոստիկանության դիմելու
փորձից՝ բռնության դեպքը որպես
անձնական խնդիր ընտանիքի
ներսում պահելու նկատառումով:

Թեժ գիծ զանգելը կամ
կանանց հարցերով զբաղվող
կազմակերպության դիմելը
երբեմն հասարակական ծանր
հետեւանքների է հանգեցնում
եւ կանայք սովորաբար այդ
քայլին են դիմում միայն
ծայրահեղ դեպքերում: Amnesty
International-ի աշխատակիցների
հետ զրույցած շատ կանայք
թեժ գծի մասին իմացել են
պատահաբար կամ էլ մեկը
մեկից: Կանայք ապաստարանում
մնալուց որոշ ժամանակ
անց վերադառնում են տուն,
սակայն նույնիսկ ապաստարան
կատարած միայն մեկ այցն
անգամ հզոր կանխարգելիչ
ազդեցություն կարող է ունենալ
բռնի ուժ կիրառելու հակված
գուզնկերների հետագա քայլերի
վրա:

*Կինը Հայաստանում փորձում է
ամեն ինչի հետ համակերպվել:
Երբ նա թեժ գիծ է զանգահարում,
ուրեմն դա նրա վերջին
հույսն է, ուրեմն նա այնու ուրիշ
ճար չունի... Ապաստարանը
տղամարդու իշխանությանը
հակահարված հասցնելու*

*արդյունավետ միջոց է: Եթե
նույնիսկ կինը ապաստարանից
տուն է վերադառնում, դա նրա
ամուսնուն ցույց է տալիս, որ կինն
իրեն լքելու ուժ ունի: Նա կարող
է ասել՝ ինձ հետ վատ վարվես,
ես կգնամ: Դու չես ամեն ինչի
տերն ու տիրակալը, ես քեզնից
ուժեղ եմ, քեզ այլընտրանք կա
և ես իմ իրավունքները գիտեմ:
Ապաստարան գնալն առաջին
քայլն էր: Ապաստարան ինձ
ստիպեց այդ քայլն անել ու
հասկանալ, որ այսպես ապրելն
այլեւս անհնար է:*

ՓՆ - Ընտանեկան բռնության զոհ,
Երեւան, 2008թ.

2002 թվականից ԱՄՆ Միջազգային
գարգացման գործակալության
ֆինանսավորմամբ հասարական
կազմակերպությունների կողմից
մի քանի ապաստարաններ են
ընդմիջումներով շահագործվել:
Առաջին այս ապաստարանները՝
ընտանեկան բռնությունը տան
ներսում թողնելու փոխարեն
հանրային քննարկման առարկա
դարձնելու փորձերը, սուր
քննադատության էին ենթարկվում:
Հայաստանի մայրության ֆոնդի և
Կանանց իրավունքների կենտրոնի
կողմից երկու ապաստարան
բացվեց Երեւանում: Երրորդը՝
«Աջակից» կազմակերպության
կողմից Գյումրիում, իսկ չորրորդը՝
Մարտունու կանանց համայնքային
խորհրդի կողմից Մարտունիում:
Այս ապաստարանների
գործունեությունը կախված
էր ընդհանրապես ստացվող
ֆինանսավորումից, և 2008
թվականի փետրվարին նրանցից եւ
ոչ մեկն այլեւս չէր գործում: Միայն
ԿԻԿ-ի կացարանը ստացված
ֆինանսավորման շնորհիվ

սեպտեմբերին ամբողջությամբ
վերաբացվեց:

Այժմ պետության, միջազգային
կազմակերպությունների և
ՀԿ-ների հովանավորությամբ մի
շարք ծրագրեր են իրականացվում:
Երկու ՀԿ-ների տնօրինությամբ
երկու ապաստարան է գործում՝
հոգեբանական, բժշկական և
իրավաբանական օգնություն
տրամադրելով թրաֆիկինգի
զոհերին: Բացի այդ, մինչև
2006 թվականի հունիսը երկու
թեժ գիծ էր աշխատում, որոնց
գործունեությունը, սակայն,
ֆինանսավորման բացակայության
պատճառով ստիպված
դադարեցվեց:

Առանց ՀԿ-ների տրամադրած
ծառայությունների, ընտանիքում
բռնության զոհերի վիճակն
էլ ավելի ծանր կլիներ:
Սակայն, կանանց նկատմամբ
բռնությունը կանխելու ու
դրանց հետեւանքներին
արձագանքելու համար օժանդակ
ենթակառույցներ ապահովելը
պետության պարտավորությունն է:
Ապաստարանների համացանցի
ստեղծումը կանանց բռնությունից
պաշտպանելու պետական
ռազմավարության հիմնական
բաղկացուցիչներից պետք է
լինի: Ապաստարանների ցանցի
ստեղծումը պետք է կանանց
բռնությունից պաշտպանելու
պետական ռազմավարության
առանցքային տարրը հանդիսանա:
Ապաստարանները հատուկ
ուղղորդման ծառայություններ
պետք է տրամադրեն
բժշկական, հոգեբանական և
իրավաբանական օգնության
կարիք ունեցող կանանց՝



© Amnesty International

**Ընտանեկան բռնության զոհ դարձած
Գրետա Բաղդասարյանը կոչ է անում
հզորացնել կանանց և երեխաներին
պաշտպանող օրենքները, ինչպես
ևսեւ պահանջում ապաստարաններ
ստեղծել, 2008թ.:**

ապահովելով նրանց բռնությունից
զերծ կյանքով ու տանիքով:

Ապաստարանների ստեղծումը
սակայն չի կարող միանշանակ
բոլոր խնդիրների լուծում
հանդիսանալ: Բացառապես
վերջիններիս ապավինելը
գյուղական վայրերում
բարդություններ կարող
է առաջացնել, քանի որ
ապաստարան այցը գաղտնի
պահելն անհնար է. «[ա]վանդական
ընտանիքներում ոչ ոք չի գնում
[ապաստարան], որովհետեւ
երբ վերադառնաս, էլ ավելի
վատ կլինի: Երեւանում
կարող ես պատսպարվել,
բայց մարզերում բոլորն իրար
ճանաչում են, այդ պատճառով
կացարանների գաղափարը սխալ
է: Այստեղ պետք է աշխատել

8 **Լռությունը պատվաբեր չէ.**
կանանց դեմ ընտանեկան և
սեռական բռնությունը Հայաստանում



© Martuni Women's Community Council, Armenia

տարբեր կառույցների հետ, ինչպիսիք են ոստիկանությունը և այլ պաշտոնական հաստատությունները, որոնք կարող են միջամտել»:

Պաշտպանական միջոցառումներում անհրաժեշտ է ներառել նաև քաղաքացիական ու քրեական իրավունքի, սոցիալական ու առողջապահական ծառայությունների վերաբերյալ գաղտնի խորհրդատվության հեռախոսով կամ անձամբ տրամադրումը: Այս ծառայությունը մատուցող խորհրդատուները պետք է վերապատրաստված լինեն և կապ ունենան համապատասխան գործակալությունների հետ, այդ թվում՝ ոստիկանության, իրավաբան-փորձագետների,

սոցիալական և առողջապահական ծառայությունների ու բնակվարչությունների հետ՝ ապահովելով արագ ուղղորդման ծառայության տրամադրումը:

Ամուսնալուծությունը

Ըստ հասարակական կազմակերպություններից մեկի ակտիվիստի, Հայաստանում լայնորեն ընդունված է այն կարծիքը, որ ամուսնալուծված ընտանիքն ավելի վատ է, քան բռնության մեջ ապրողը: Վերջինս ազատում է պետության անհատ քաղաքացիներին այսպիսի բռնությունից պաշտպանելու իր պարտականություններից և բեռը գցում կանանց, իսկ շատ դեպքերում նաև երեխաների

վրա՝ բռնության ֆիզիկական, հոգեբանական ու տնտեսական ազդեցության ենթարկելով նրանց:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային համաձայնագիրը պահանջում է «հնարավոր ամենալայն պաշտպանությամբ և աջակցությամբ ապահովել ընտանիքը, որը հասարակության բնական և առանցքային խմբային միավորն է»: Սակայն ընտանիքի պաշտպանությունը չի կարող առաջնային համարվել կանանց ու աղջիկների՝ առանց բռնության կյանքի իրավունքի հաշվին:

Իմ միակ ցանկությունը վերջին հինգ-վեց տարիների ընթացքում այս մարդուց բաժանվելն էր և այլևս երբեք չտեսնելը: Բայց

ես մինչև հիմա չեմ կարող
դա անել. չեմ կարող նրանից
ազատվել: Երբ ասացի, որ
ապահարգան եմ ուզում, նա
ինձ ծեծեց ու ասաց «դու ինձնից
բաժանվելու իրավունք չունես»:
[...] Հինգ տարի ես բաժանվել
եի ուզում, ու տեղ չկար գնալու:

Երբ ես ապահարգանի հայտ
ներկայացրի, նշանակվեց լսումը,
ես գնացի, բայց ամուսինս
չեկավ: Դատավորը նշանակեց
երկրորդ լսումը, բայց նա կրկին
չեկավ, եւ երրորդը, ու այսպես
շարունակ: Դատարանները չեն
ուզում, որ բաժանվես: Դա նրանց

դիրքորոշումն է, նրանք չեն
ուզում, որ ընտանիքը կիսվի: Այդ
պատճառով միշտ ժամանակ են
տալիս մտածելու. չեն ուզում քեզ
բաժանված տեսնել:

Պ.Ն. - Ընտանեկան բռնության գոհ,
Երեւան, 2008թ.

Ընտանեկան բռնության մասին օրենքի նախագիծ

«Ընտանեկան բռնության
մասին օրենքը պետք է լինի
գործող օրենք: Այն լուրջ
աջակցության կարիք ունի՝
հասարական գիտակցության
մեջ, ինչպես նաեւ թղթի վրա,
ընտանեկան բռնությունը որպես
հանցագործություն ամրագրելու
համար»:

(ՀԿ ակտիվիստ, Գյումրի, հուլիս,
2008թ.)

Ընտանեկան բռնության մասին
օրենքի նախագծի մշակման
համար 2007 թվականին
«Կանանց իրավունքների
կենտրոն» ՀԿ-ի կողմից
աշխատանքային խումբ
ստեղծվեց՝ ընդգրկելով
Աշխատանքի եւ սոցիալական
հարցերի նախարարության
ներկայացուցիչների,
ՀՀ ոստիկանության
պաշտոնյաների,
իրավաբան-փորձագետների
եւ կանանց ՀԿ-ների
աշխատակիցների: Վերջինիս
նպատակն էր մշակել մի
օրենք, որն ընտանեկան
բռնությունը հստակորեն
կսահմաներ որպես քրեական

հանցագործություն եւ նաեւ
արդյունավետ մեխանիզմներ
կապահովեր վերջինիս
զոհերին պաշտպանելու
եւ աջակցելու համար:
Օրենքի առաջին նախագիծը
հանրությանը ներկայացվեց
2008 թվականի հուլիսին
Երեւանում կազմակերպված
կլոր սեղանին քննարկման
դրվելուց հետո: Այս օրենքով
նախատեսվում է միասնական
արձագանքի եւ աջակցության
համակարգ ստեղծել, ըստ որի
նոր ուժեր ոստիկանությանը
պաշտպանության հրահանգներ
կարող են տալ: Այն նաեւ
աջակցության համակարգ է
առաջադրում, որը ներառում է
ընտանեկան բռնության զոհերի
համար խորհրդատվական
կենտրոնների եւ
ապաստարանների ստեղծումը:
Ներառված նոր դրույթի
համաձայն նախատեսվում է
նաեւ ընտանեկան բռնության
դեմ միջոցառումների
իրագործման եւ համակարգման
համար իրավասու
կառավարական մարմին
ստեղծել. օրինագիծը, սակայն,
առայժմ չի մանրամասնում
այս մարմնի կազմը որոշող
գործընթացը եւ չի սահմանում
դրա պատասխանատվության
ոլորտներն ու կառուցվածքը:

Օրինագիծը բացառում է
ընտանեկան բռնության
զոհերի վարքը դիտել որպես
ընտանեկան բռնության
քրեական հետապնդումը
մեղմող գործոն: Այն
ոստիկանությունից պահանջում
է ընտանեկան բռնության մասին
դիմում ստանալու դեպքում
գործին ընթացք տալ, գրանցել
հայտերը եւ ընտանեկան
բռնության կամ նման վտանգի
դեպքում տեղեկացնել
ընտանիքի անդամներին իրենց
իրավունքների եւ գոյություն
ունեցող միջոցառումների ու
ծառայությունների մասին:

Օրինագծի ներկայիս
նախագծում «ընտանիքի»
սահմանումն ընդգրկում է
պաշտոնապես զրանցված եւ
չզրանցված ամուսնությունները,
ինչպես նաեւ զուգընկերներին,
«որոնք մշտապես կամ
հիմնականում միասին են
ապրում»: Սահմանումը
սակայն չի ներառում միասին
չապրող զուգընկերներին,
որի պատճառով օրենքի
պաշտպանությունից դուրս են
մնում իրենց զուգընկերների
հետ նույն հարկի տակ չապրող
կանայք:

Խիստ սահմանափակ կամ ընդհանրապես ոչ մի աջակցություն չի տրամադրվում բռնությունից ազատվել ցանկացող կանանց և երեխաներին: ՀԿ-ների մի քանի ակտիվիստներ շեշտեցին բաժանված կանանց ու միայնակ մայրերի դժվարություններն՝ անկախ ապրուստի միջոց, բնակավայր և այլ տիպի սոցիալական աջակցություն ստանալու հարցում: Նրանք ապրուստ վաստակելու, բնակարան գտնելու կամ այլ սոցիալական աջակցությունից օգտնվելու հնարավորություն և միջոցներ չունեն: Հատկապես վրա, անգամ դատարանների միջոցով, չափից ավելի շեշտադրումը չի կարող այլընտրանք հանդիսանալ ընտանեկան բռնության զոհերի համար մատչելի արդարադատության ապահովման համար: Պետությունից պահանջվում է հարցին ամբողջական մոտեցում ցուցաբերել՝ բռնությունից խուսափող կանանց համար մի շարք մեխանիզմներ և ռեսուրսներ ստեղծելով, այդ թվում աջակցելով նրանց աշխատանք գտնել և ապահովելով երկարաժամկետ բնակատեղիով:

Անպատժելիությունը

Ընտանեկան բռնության քիչ դեպքեր են դատարան հասնում համեմատ այլ հանցագործությունների: ՀԿ-ների ակտիվիստներն ու կանայք հայտնեցին, որ շատ դեպքեր չեն հասնում քրեական հետաքննության փուլ այն պատճառով, որ տուժողի վրա ճնշում է գործադրվում՝ ստիպելով նրան բողոքը ետ վերցնել: Ընտանեկան բռնության մեղավորների դեմ դատական գործ կարող է հարուցվել միայն տուժածի ցուցմունքի հիման վրա: Ոստիկաններն առանց տուժածի գրավոր դիմումի չեն կարող միջամտել. եթե հարեանները կամ ազգականները դիմեն ոստիկանություն, նրանց չի թույլատրվում դատ հարուցել: Բողոք ներկայացնելու ծանրությունն ընկնում է տուժողի ուսերին, ինչը շատ անհավանական է դարձնում գործընթացը: Ավելին, դատական գործերը կարճվում են այն համոզմունքի հիման վրա, որ հայցվորը «հաշտվել է» մեղադրյալի հետ, ինչն էլ նա անում է ճնշման տակ:

Հետապնդող քրեական գործերն առավել հաճախ վերաբերում են հատկապես լուրջ ֆիզիկական վնասվածքի կամ մահվան դեպքերին: ՀՀ Գլխավոր դատախազությունից ստացված տեղեկության համաձայն՝ 2006 և 2007 թվականներին ընդհանուր առմամբ 63 տղամարդ է դատապարտվել իրենց կանանց կամ զուգընկերուհիների դեմ կատարած տարբեր հանցանքների համար կամ ընտանեկան ու սեռական բռնությանը վերաբերող ՀՀ Զրեական օրենսգրքի այս

կամ այն հոդվածով: Այդ թվում գրանցվել է իրենց ամուսինների կամ զուգընկերների կողմից կանանց սպանության 8 դեպք և տարբեր հոդվածներով հետապնդվող 47 դեպք (ծանր և միջին չափի մարմնական վնասվածք, ծեծ և խոշտանգում), որը և 2006-2007 թվականների ՀՀ դատավճիռների ընդհանուր թվի 1,3%-ն է կազմում:

Օրենսդրական դաշտը

Կանանց դեմ բռնության մասին հատուկ օրենք առայժմ չկա: Սակայն ընտանեկան բռնությանը և թրաֆիկինգին վերաբերող օրինագծերը կառավարության կողմից քննարկման փուլում են:

Առայժմ ընտանեկան բռնության հանցագործությունները հետապնդվում են ՀՀ Զրեական օրենսգրքի ընդհանուր դրույթներով, որոնք վերբերում են հայիոյանքին, ծեծին, մարմնական վնասվածք հասցնելուն ու սպանությանը, իսկ բռնության դեպքում տարբերություն չի դրվում անծանոթների և ընտանիքի անդամների միջև: Զրեական օրենքին այսպիսի գենդերային առումով չեզոք մոտեցումը կարող է գործել, եթե օրենքը կիրառվում է խիստ հավասար՝ անկախ հայցվորի և ենթադրելի մեղադրյալի միջև փոխհարաբերությունից կամ սեռից. իրականում, սակայն, ենթադրվում է, որ տղամարդիկ իրավունք ունեն կանանց նկատմամբ բռնություն

կիրառել, որի հետեանքով էլ տղամարդու կողմից բռնությունը իրականում բռնություն չէ: Հանցանքի սահմանման այս գենդերային առումով չեզոք մոտեցումն անտեսում է էական մի տարբերություն՝ հայցվորի և մեղադրյալի միջև առկա փոխհարաբերությունը: Խնդիրն այլ է, երբ բռնություն կատարողը անձանոթ է և բոլորովին տարբեր, երբ դա ամուսինն ու ապրուստի միջոց վաստակողն է, երեխաների հայրը կամ այլ ազգական, որից կինը տնտեսական կամ այլ կախում ունի:

Եզրակացություն

Պետական որոշ պաշտոնյաներ այժմ ընդունում են կանանց դեմ բռնության երեւոյթի առկայությունը Հայաստանում: Նախկինում խնդրի վերաբերյալ մերժողական դիրքորոշման հետ համեմատ սա իհարկե կարելու փոփոխություն է, սակայն ընտանեկան և սեռական բռնության նկատմամբ հասարկության լայն զանգվածների վերաբերմունքի արմատական փոփոխության ուղղությամբ

պետությունն անհապաղ քայլեր պետք է ձեռնարկի:

Պետությունը պետք է հստակ և խստորեն դատապարտի կանանց դեմ բռնությունը: Վերջինս կարող է իրականացվել հանրային ուսուցման միջոցառումների, ինչպես նաև կանանց՝ իրենց իրավունքների մասին տեղեկացնելու միջոցով՝ հասարակության մեջ արմատավորելով այն գաղափարը, որ ընտանեկան և սեռական բռնությունը հանցագործություն է և մարդու իրավունքների ոտնահարում:



**Առաջարկություններ ՀՀ
Կառավարությանը**

■ Ընտանեկան բռնության վերացումը և մարդու իրավունքների միջազգային համաձայնագրով Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարումը դարձնել պետական առաջնահերթություն՝

■ Զբեականացնելով ընտանեկան բռնությունը, ինչպես նաև այն կանխարգելելու ուղղությամբ համապատասխան քայլեր ձեռնարկելով և բռնության գոհերին աջակցություն տրամադրելով: Անհրաժեշտ է քրեականացնել ընտանիքում կանանց դեմ գործադրվող բռնությունը՝ ներառյալ հոգեբանական ճնշումները, ծեծը, բռնաբարությունը, այդ թվում՝ ամուսնական, սեռական և գենդերային հողի վրա իրականացվող տարատեսակ բռնությունները:

■ Ապահովելով ընտանեկան և սեռական բռնության գոհերի համար քրեական արդարադատության մատչելիությունը՝ առանց բողոքը ետ վերցնելու կամ իրենց դեմ բռնություն գործադրած անձի հետ «հաշտվելու» պարտադրանքի, ապահովելով ընտանեկան կամ սեռական հանցավոր բռնության՝ այլ բռնություններին հավասարազոր լուրջ հետաքննումը:


■ Համապատասխան կառավարական մարմին ստեղծելով, որը կիրականացնի ընտանեկան բռնության, սեռական բռնության և սեռական ոտնձգության դեմ պետական միջոցառումները և կհամակարգի այս ոլորտում գործող կառավարության տարբեր գործակալությունների ջանքերը: Այս մարմինը պետք է անհրաժեշտ իրավասություն և միջոցներ ունենա՝ իր պարտականություններն արդյունավետ իրականացնելու համար:

■ Ապահովելով ընտանեկան և սեռական բռնության գոհերի՝ աջակցության ծառայություններից օգտվելու մատչելիությունը՝ խորհրդատվություն և պաշտպանություն տրամադրող ճգնաժամային կենտրոնների և ապաստարանների ազգային համացանցի միջոցով:

■ Երկկողմ ուղղորդման արդյունավետ համակարգ ստեղծելով, որը կընդգրկի ընտանեկան և սեռական բռնության հարցերով զբաղվող տարբեր գործակալությունների, այդ թվում ոստիկանության, առողջապահության մարմինների, իրավական աջակցության կենտրոնների, ապաստարանների և ճգնաժամային կենտրոնների ռեսուրսները:

■ Միջոցառումներ ձեռնարկելով՝ իրազեկելու համար հասարակությանը, որ ընտանեկան բռնությունը ոճիր է և մարդու իրավունքների ոտնահարում: Մենք պետք է պայքարենք կանանց նկատմամբ բռնությունն արդարացնողների դեմ:

[Այս ամփոփումը հիմնված է Amnesty International կազմակերպության «Լռությունը պատվաբեր չէ. Հայաստանում ընտանեկան բռնության դեմ պայքար» զեկույցի վրա (Ինդեքս՝ EUR/54/004/2008)



Amnesty International-ը ավելի քան 150 երկրներում և տարածաշրջաններում գործող 2,2 միլիոն մարդկանց համաշխարհային շարժում է, որի հետևորդները պայքարում են մարդու իրավունքների լուրջ ոտնահարումներին վերջ դնելու համար:

Մեր երազանքն է, որ յուրաքանչյուր անձ վայելի Մարդու իրավունքների հանընդհանուր հռչակագրում և մարդու իրավունքների այլ միջազգային չափանիշներով ամրագրված բոլոր իրավունքները:

Մենք անկախ ենք իշխանություններից, քաղաքական գաղափարախոսությունից, տնտեսական շահից կամ կրոնից՝ ֆինանսավորվելով հիմնականում անդամագրությունից ու հանրային նվիրատվություններից ստացված զուամարով:

Լոյեմբեր 2008թ.
Ինդեքս EUR 54/005/2008

Amnesty International Secretariat
Peter Benenson House
1 Easton Street
London WC1X 0DW
United Kingdom
www.amnesty.org